

ՓԱՅԼԱԿ ԾԻԱԾԱՆ

ՀԱՆԳՉՈՂ ՍԻՐՏԸ

Դարերը մեզ տվել էին մի մեծ ծնունդ,
Որ դարերն էր հանդարտ կշռում,
Եվ փառապանծ մեր օրերին տալիս էր հեֆ ու
հերշնչում:

Երբ Կրեմլի կարմիր աստղի շողֆերի հետ
Իր հառագող իմաստության
Պատգամներն էր տալիս երկրին,
Լույս էր իջնում անգամ անհույս նեգրի
խավար խրեթի մեջ,
Եվ երկիրը մի պտույտ էլ դեպի առաջ էր
շարժվում:

Երբ անհամբեր նրան էին նայում մարդիկ,
Նա երկիրը Սովետական
Ինչպես սլաֆ ուղղեց վաղվա արշալույսին,
Որպես նրանց գալիք կյանքի ուղենիշը
անդավանան:
Սովետական բազմալեզու ժողովրդից
Նա փանդակեց մի բյուրեղյա միասնություն,
Որը երբեք չի՝ բեկանվի և չի՝ լուծվի:
Նա կառուցեց մի վեհիմաստ ու պայծառ
կյանք:

Նա իմ երկիրը փրկել է դաժան մահից,
Ինչն էլ հեռվից տուն է կանչել,

Երբ մեն-մենակ, հայրենագուրկ պանդուխտ
հայի

Անհատակ վիշտն իմ՝ սրտի մեջ՝
Շրջում էի օտար ափեր...

Եկել էր նա ողջ աշխարհին

Որպես բարիք,

Որպես փրկիչ

Եվ որպես հայր:

Ծանր է վիշտը մեր մեծ երկրի,
Եվ կորուստը՝ անվերադարձ—
Ո՛հ, մեռե՛լ է Ստալինը...

Ո՛չ, չի՝ մեռել և չի՝ մեռնի
Քանի շունչ կա երկրի վրա,
Եվ թանկագին նրա կյանքը
Կնորոգվի ամեն մի նոր ծնունդի հետ:

Լո՛ւտ, նայեցե՛ք այս խոնարհված դրոշներին,
Եվ մարդկության երբը բոլ ձեզ վկա լինի:
...Ստալինը մեծ ծնվեց փոքր մի խրեթում,
Հասակ առավ պայքարի մեջ,
Իսկ այսուհետ հավերժ կապրի
մեր սրտերում:

